Թ· ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 3 ԱՊՐԻԼ 1904—ՎԱՌՆԱ — ԹԻՒ 25

# ԻՐԱՒՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՊԱՅՄԱՆՔ
ՊՈՒԼԿԱՐԻԱ
Տարեկան 12 . . Ֆր·
Վեցամսեայ 6 «
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . . 14 Ֆր·
Վեցամսեայ . . . . 7 «
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2. 60 Տոլար
Վեցամսեայ 1· 50 «
ԿԱՆԽԻԿ

Ծանուցման տողը
20 սանթիմ

ՀԱՍՑԷ
Rédaction du journal
„Iravounk"
VARNA (Bulgarie)
Редакция
на вѣстникъ
Иравунк"
БАРНА

Գրութիւնք ետ չեն
տրուիր

Rev. Père G. Kalemkarian Michitaris
tengasse No. 4
Vienne

## ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Երբոր մարդիկ, տրուած մի ամենապարզ հարցի վճռաբանութեան մէջ, կընտրեն իրենց, որպէս կարծիք, մօքերից ամենաանմիտը, ամենաանբովանդակը, իրենք իրենց կենթարկեն, ակամայ, հետեւեալ երկսայրին (դիլէմմա)· Այդ մարդիկ կա՛մ ապուշ են և կա՛մ անպիտան։

Անշուշտ, սխալուիլը մարդկային է, և մենք ամենքս էլ ենթակայ ենք սխալուելու· սակայն դրան էլ մի չափ ու սահման կայ, դրան էլ մի աստիճան կայ․ որից այն կողմը՝ այդ երկսայրին է որ կդրուի, որպէս միայն հնարաւոր, եթէ միայն, ի հարկէ, չնկրկայանայ հիւանդաբանական առանձին պարագայ։

Այդ դիլէմմայի՛ն ստիպուած ենք դատապարտել մի շարք մարդկանց, որոնք թւում են ուխտած լինել ամեն կերպով՝ ամեն գնով, դէմ կանդնելու մի ամենադեղեցիկ գործի, ինչպիսին է յեղափոխական բոլոր անջատ ոյժերի ի մի միացումը մէ՛կ դրօշի, մէ՛կ ուղղութեան տակ։

Այդ մարդիկ, անկարող դիմադրելու յեղափոխական շարքերի մէջ և նրանցից դուրս, լայն ժողովրդի ովկէանոսում, հետըզհետէ աւելի ու աւելի բարձրացող Միութեան հոսանքին, դըլուխները կորցրած, գերմարդկային ճիգեր են թափում նրան վիժեցնելու, նրան անյաջողութեան մատնելու։

Ի՞նչ են ասում։

Ասում են թէ Միութիւնը անկարելի է, որովհետև, ասումեն, ի՞նչպէս կարելի է որ մարդիկ իրենց հաւատքները թողնեն կամ փոխեն։ Հաւատքը կարելի բա՞ն է թողնել կամ փոխել։

Բայց ո՞վ է ասում կամ պահանջում որ մարդիկ իրենց հաւատքը թողնեն կամ փոխեն։

Այդպիսի պահանջ ոչ ոք չէ դրած մինչև հիմա, որքան մենք գիտենք։ Մենք ասում ենք որ միևնոյն նպատակի համար և միևնոյն թշնամու դէմ կռւող ոյժերը չպէտք է որ լինին անջատ, չպէտք է որ գործեն առանց որոշ, մի և ընդհանուր մտածութեամբ վայր բերուած ուղղութեան· որ այդպէս անել անմիտ է, աննպատակ է և վնասակար։ Այս լեզուն հասկանալի չէ՞։

Մի՞թէ Ճապօնը, որ այս րոպէիս կռւումէ Ռուսաստանի դէմ, որպէս մի մարմին, բաղկացած է բոլորովին միատեսակ մտածող անհատներից։ Մի՞թէ Ռուսաստանը, նրա դէմ կռւող միւս մարմինը, տարբեր հանգամանքների մէջ է այդ կողմից։ Մի՞թէ մենք ինքներս անպայման ստիպուած ենք թողնելու մեր համոզումները, մեր գաղափարները, մեր հաւատքը, եթէ, յանկարծ, հակառակ այդ մարդկանց անհասկանալի ուխտին ու փափաքներին, մի օր մեր ուզած ու բոլոր ոյժով կանչած միութիւնը իրականանայ։

Բայց այդպիսի բան չկայ։ Այդ սխալ է և պէտք է միանգամ ընդմիշտ թողնել այդ անմիտ արգումէնտը, որ մեծ թափով և անսպասելի գիտի տուած ամբարտաւանական չեչտով հրապարակ հանուած է մի ժամանակից ի վեր և որը չեն դադարում կրկնելուց, յեղյեղելուց, և՛ բեմից, և՛ մամուլից, և՛ մութ ու խուլ անկիւններից, բոլոր եւ ամեն տեսակի չահադրգիռները։

Ասացէք խնդրեմ, ո՞րն է մեր յեղափոխական ծանօթ կուսակցութիւններից—մեր խօսքը, ի հարկ է, այն կուսակցութիւնների մասին է, որոնք իրենց նպատակ դրած են Հայաստանի Ազատութիւնը՝ Օսմանեան բռնապետութեան լուծից—ո՞րն է, ասումենք, որ տարբեր նպատակի վրայ կեցած լինի․ Հնչ․ երկու կուսակցութիւննե՞րը, Հ․ Յ Դաշնակցութի՞ւնը, ինքը, Միութենակա՞նը․—ո՛չ մէկը և ո՛չ միւսը։ Բոլորն էլ դաւանում են միևնոյն նպատակը։

Լաւ ուրեմն, մենք էլ ասում ենք· այդ կուսակցութիւնները առանձին առանձին եւ միմեանցից գաղտնի պահուած ու միմեանց չէզոքացնող ուղղութեամբ չեն կարող ընդհանուր նպատակը իրագործել, եթէ նոյն իսկ ընդունէինք մի րոպէ որ նրանք հրաշքով կ՚դադարէին մղել միմեանց դէմ մի այլ սպանիչ ներքին կռիւ, որ մեր ամենօրեայ ամենատխուր իրականութիւնն է, բացի ընդհանուր թշնամու դէմ մղուող կռուից։

Եւ այս ասելով, կկնում ենք, մենք ամենևին չենք ուզում հասկանալ, կամ պահանջել․որ մարդկանց հաւատքը, համոզումները խլուին իրենցից· ոչ, այդպիսի յիմար, անմիտ բան մենք չ՚պահանջեցինք։ Համոզումները կ՚փոխուին մի՛միայն համոզման ոյժով· բայց ընդհանուր նպատակի յաջողութեան համար մասնաւոր համոզումները մասնաւոր, անհատական աշխարհին պէտք է պատկանեցնե՞լ թէ ոչ։ Ուրիշ ի՞նչպէս կարելի է ազգութիւն ստեղծել, ազգային գոյութեան կռիւ մղել՝ անկախ անհատական, կուսակցական, ցեղային նկատումներից։

Պարզ է, հետևաբար, որ յեղափոխական ընդհ· Միութիւնը կկատարուի, առանց մազի չափ դիպչելու անհատական առանձին գաղափարների, համոզումների, հաւատքի· Կռիւը հայի կռիւ է և ոչ կուսակցութեան, և կարծեմ շատ լաւ հասկանալի է բոլորին, որ այդ կռիւը հայերը կարող են մղել Օսմանցու դէմ, չառանց իրարից հաշիւ պահանջելու թէ արդեօք ամենքն էլ սօսիալի՞ստ են, անիշխանակա՞ն են, լուսաւորչակա՞ն են, բողոքակա՞ն են, կաթոլի՞կ են, դարվինի՞ստ են, աստուածեա՞ն են թէ անաստուածեան։

Ահա՛ հարցը։ Նա, ինչպէս տեսնումէ, շատ պարզ է, լոյսի պէս պարզ, և մենք զարմանում ենք թէ ի՛նչպէս չեն հասկանում կամ չհասկանալ են ձևացնում այդ մարդիկը, որոնք աշխատում են քարեր նետել եկող Միութեան առաջ և պղտորել ժողովրդի միամիտ մասի մտքերը։

Բայց ժողովուրդը չի խաբուի· նա գիտէ, և յուսով ենք, կգիտենայ այդ խոչընդոտների վերայից կոխել անցնիլ յաղթական դէպի ընդհանուր Միութեան առողջարար և փրկարար գաղափարը։

Հմայեակ Խուշպուլեան

---

## ԱՆԴՐԱՆԻԿԻ ԽՈՒՄԲԸ

Կ. Պոլսէն կը գրեն Վիէննայի «Էնֆորմասիոն լրագրոյն․

Սասունէն տեղեկութիւնները օրէ օր աւելի ցնցող կը հասնին, և հոս կը հարցունեն իրարու· մի՞ գուցէ այս խորհրդաւոր լռութեան տակ սոսկալի բան մը կը պատրաստուի· զի, ինչպէս կը յիշուի, 1894 ին Հայաստանի մէջ գործուած վայրագութեանց գոյժը չորս ամսէ վերջը միայն Եւրոպային հասաւ։

Դժբաղդաբար, Մուշը, Սասունը խիստ հեռու են, և հոն չկան Եւրոպական հիւպատոսարաններ, որպէսզի ականատես ըլլային գործուած խժդժութեանց։ Ասոր համար Հայոց Պատրիարքարանին մէջ մեծ մտահոգութիւն կը տիրէ։ Երբ Սուլթանը պատրիարքարանէն խնդրեց որ ապստամբները հանդարտեցնէ, Օրմանեան պատրիարքը Մուշի առաջնորդը ղրկեց ապստամբապետին· բայց անոնց բանակցութեանց արդիւնքը դեռ յայտնի չէ· Միւս կողմանէ դժուար չէ Անդրանիկի պատասխանը գուշակել, այսինքն Սասունի Հայերը խաւարարներ չեն, այլ զէնքի փարած են, որպէսզի ինքզինքնին պաշտպանեն իրենց ոխերիմ թշնամի քրդաց ասպատակութեանց դէմ։

Սակայն Թուրք իշխանութեան գործին չգար որ Հայերը զէնք կրեն, որովհետև անոնց դիւրաւ կրնայ անոնց խօսք հասկցնել երբ անզէն են։

Անդրանիկ և իր մարդիկը, որոնք դրօշակեան դաշնակցու-

